

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՐԻՆԻ
 ՆԱՀԱՆԳՈՒՄ ԺԹ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ, Ի. ԴԱՐԻ ՍԿՁԲԵՐԻՆ.
 ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ
 ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ

Յովհաննես Չատիկեան

ԺԹ. դարի երկրորդ կեսին Օսմանեան կայսրութիւնն ազրարային երկիր էր, որ-տեղ սոցիալ-տնտեսական, հողային յարաբերութիւնները տարբեր նահանգներում ու գաւառներում ունէին իրենց առանձնայատկութիւնները: Այստեղ հողի սեփականութեան ձեւերը սահմանուել էին Սուլթանի սուլթանի «կանուն նամէ»ի հիման վրայ: Այն ամբողջում էր հողի սեփականութեան երեք կարգ՝ 1. տասանորդական (տրւում էր մահմեդականներին՝ որպէս լրիւ սեփականութիւն, մուլք. հողատէրը վճարում էր միայն աշար-տասանորդ), 2. հողեր, որոնք տրւում էին ոչ մուսուլմաններին՝ պայմանով, որ վճարուի գլխահարկ՝ խարաջ եւ հողահարկ (հողատէրն օգտուում էր սեփականութեան իրաւունքից, բայց, ի տարբերութիւն առաջինի, լրացուցիչ պարտադրուած պարհակներ էր վճարում), 3. պետական հողեր (տրւում էին ցմահ օգտագործման զինուորական ծառայութեան դիմաց: Ոչ մահմեդական գիւղացիներն այս հողերն օգտագործելու համար վճարում էին թափու, հողահարկ եւ տուրք, տասանորդ, որը երբեմն հասնում էր բերքի 1/9, 1/8, 1/7, 1/2 մասին)¹:

Սուլթանի օրօք էին մշակուել նաեւ ենիչերիների կանոնադրութիւնը եւ մուսուլմաններին ու ոչ մուսուլմաններին հողային իրաւունքները:

Իւրայատուկ համակարգ էր զինուորական հողատիրութիւնը: Թուրքական բանակի աշխարհազօրը կազմուած էր երկու մասից՝ զիւմէթներ, որոնք, ուսումնասիրողի կարծիքով, բանակի դաստիարակուած եւ համեմատաբար զարգացած հատուածն էին ներկայացնում, եւ թիմարներ, որոնք իրարից տարբերուում էին հող ստանալու յատուկ ակտերով:

Զիւմէթի եկամուտը 20,000-99,990 ասպր էր: Զիւմէթի եկամտից մէկ ասպրով աւելի էր սանջակ բէյի եկամուտը՝ 100,000-199,990 ասպր: Վերջինից շատ եկամուտ ունէր միայն բեգլարբէկը:

Թիմարները բաժանուում էին երկու խմբի՝ մինչեւ 19,999 ասպր եկամուտ ունեցողներ եւ 3000-6000 ասպր եկամուտ ունեցողներ²:

Կայսրութեան անատոլիական մասում զիւմէթի եւ թիմարի հողերը ժառանգաբար էին փոխանցուում: Նրանց որդիներն արդէն պարտադրուած չէին մասնակցելու արշաւանքներին եւ կարող էին իրենց փոխարէն ուղարկել ծառաներից մէկին:

Թուրքիայում հողի գերագոյն տէրը սուլթանն էր: Բուրգի երկրորդ աստիճանը զբաղեցնում էր մեծ վեզիրը: Նրան յաջորդում էին բեգլարբէկերը՝ նահանգապետները: Յաջորդ աստիճանում էին գտնուում սանջակ բէկերը, որոնցից 22-ն առաջին կարգի էին, այսինքն՝ ղեկավարում էին առաւել կարեւոր, եկամտաբեր գաւառներ:

1 Д. М. Бакрадзе, Исторический очерк турецкой системы землевладения, Тифлис, 1889, стр. 5.

2 Նոյն տեղում:

Առաջին կարգի բեգլարբէկերը վեցն էին: Նրանց շարքի երրորդ հորիզոնականում էր Կարինի բեգլարբէկը:

Նշենք, որ էրզրումի էալէթն այդ ժամանակաշրջանում ունէր 11 գաւառ, եւ եկամուտը կազմում էր 1,200,000 ասպր³:

Թուրքիայի հողային յարաբերութիւնների ուսումնասիրման յաջորդ աղբիւրը 1856 թ. յետոյ կազմուած դուստուրն է (օրէնքների ժողովածոյ), որը Սուլթանի սուլթանի «կանուն նամէ»ի համեմատ աւելի որոշակի էր սահմանում հողատիրութեան իրաւունքները: Դուստուրը նշում էր հողատիրութեան երեք գլխաւոր կարգ՝ 1. մուլք, 2. էրազի-միրիէ, 3. մեկաֆէ: Այն ներառում էր ինչպէս հողօգտագործման հիմնական իրաւունքները, այնպէս էլ հողօգտագործման իրաւունք արտօնող դեֆտերները՝ գրքերը, տետրերը, ակտերը:

Ըստ դուստուրի՝ մուլք հողատիրութեանն էին պատկանում՝ 1. տասանորդական հողերը, 2. խարաջի հողատարածուկան հողերը, 3. բոլոր կառոյցները, որոնք թիւնները, 4. այն հողերը, որոնք սուլթանի յատուկ ֆերմաններում ճանաչուել են որպէս մասնաւոր սեփականութիւն, ինչպէս օրինակ՝ ա) որոշակի չանուկիւն, ինչպէս օրինակ՝ բ) փի մշակելի հողերը կամ չիֆթլիկները, բ) ծովից խլուած հողերը, գ) էրազի-միրիէ, բայց մասնաւոր սեփականութեան տակ գրուած հողերը, որոնք յատկացուել էին եկեղեցուհի⁴:

Մեկաֆէ հողերը երեք տեսակի էին. ա) մուլք հողեր, որոնք դարձել էին վակուֆային եւ հաստատուել շերիի օրէնքով. դրանց ողջ եկամուտը պատկանում էր զրանց ողջ եկամուտը պատկանում էր մզկիթին, բ) հողեր, որոնք մասնաւոր անմզկիթին, նուիրաբերուել էին եկեղեցուն եւ դարձել վակուֆային (այս հողերից ստացուած եկամուտն օգտագործուում էր բարեգործական նպատակներով), գ) նուիրաբերուած այգիներ, որոնց եկամուտն օգտագործուում էր գիւղական մզկիթների պահպանութեան համար:

Դուստուրը էրազի-միրիէի եւ վակուֆի համար սահմանում էր մասնաւոր, բայց ոչ հասարակական տիրապետում:

Հողային նշուած յարաբերութիւնները պահպանուեցին մինչեւ ԺԹ. դարի երկրորդ կէս, ապա գործադրուեց հողի երկարատեւ վարձակալութեան իրաւունքից թափու կալուածագիրը:

Արեւմտահայութեան 60%-ը կազմող գիւղացիութիւնը հող էր վերցնում պետութիւնից եւ կալուածատէրերից: Թափուի համար որոշակի չափ սահմանուած չէր: Ըստ կարողութեան եւ հնարաւորութեան գիւղացին կարող էր շատ կամ քիչ հող ունենալ: 1858 թ. հողային օրէնքով թափուի համար վճարում էին հողի արժէքի 5%-ը: Կալուածագիր ունենալ դեռեւս չէր նշանակում, լինել այդ հողի սեփականատէր. այն տրւում էր ժամանակաւոր օգտագործման: Այլ խօսքով՝ թափու ունեցողը համարուում էր օգտագործող, մշակող: Թափու վերցրած հողի դիմաց մահմեդականները վճարում էին միայն հողային տուրք, իսկ քրիստոնեաները՝ նաեւ տասանորդ (աշար):

Թափու կալուածագրում նշուում էին նահանգը, գաւառը, կալուածքի տեղը, չափը, եկամտաբերութիւնը: Այն հաստատուում էր սուլթանական զինանշան կնիքով: Թափուի հիմքում ընկած էր հազար գուրարը՝ կալուածատիրական այն իրաւունքը, որով հողը յանձնուում էր երկարամեկէտ օգտագործման՝ հողային օրէնսգրքի հիման վրայ: Թափու տալու իրաւունքից գաւառներում օգտուում էին էրազի մեմուրը, կալուածային պաշտօնեան, գաւառի կալուածքների հսկիչը՝ դեֆտեր խազանի մեմուրին, իսկ նահանգներում՝ դեֆտեր խազանի միւղիլը՝ նահանգի կալուածքների հսկիչը:

Թափու կալուածագրում նշուում էին նահանգը, գաւառը, կալուածքի տեղը, չափը, եկամտաբերութիւնը: Այն հաստատուում էր սուլթանական զինանշան կնիքով: Թափուի հիմքում ընկած էր հազար գուրարը՝ կալուածատիրական այն իրաւունքը, որով հողը յանձնուում էր երկարամեկէտ օգտագործման՝ հողային օրէնսգրքի հիման վրայ: Թափու տալու իրաւունքից գաւառներում օգտուում էին էրազի մեմուրը, կալուածային պաշտօնեան, գաւառի կալուածքների հսկիչը՝ դեֆտեր խազանի մեմուրին, իսկ նահանգներում՝ դեֆտեր խազանի միւղիլը՝ նահանգի կալուածքների հսկիչը:

3 Д. М. Бакрадзе, Գ2. աշխ, էջ 7:

4 Նոյն տեղում:

րոնական եւ Արեւելեան Անատոլիայում օգտագործւում էր մշակելի հողատարածութիւնների միայն 10%-ը¹³:

Կարինի նահանգը նշուած ժամանակահատուածում ունէր 41,680 քառ. կմ հողատարածութիւն: Եթէ ընդունենք այն վկայութիւնը, որ կայսրութեան ասիական նահանգներում մշակուած էր օգտագործելի հողատարածութիւնների միայն 1/2-ը, ապա նահանգում մշակման ենթակայ էր 20,680 քառ. կմ հողատարածութիւն:

Նահանգի բնակչութիւնը հասնում էր 646,000-ի, որից քաղաքային բնակչութիւնը կազմում էր 93,000 մարդ¹⁴: Եթէ բնակչութեան ընդհանուր թուից հանենք քաղաքաբնակների թիւը, ապա կ'ունենանք գիւղական բնակչութեան քանակը՝ 646,000 - 93,900 = 552,100: Ստացուածից հանենք նաեւ քոչուոր եւ անասնապահ քրդերի թիւը: Օգտագործելի հողատարածութիւնները բաժանելով հողամշակութեամբ զբաղողների քանակին՝ կը տեսնենք, որ հողագործութեամբ զբաղող բնակչութիւնը զուրկ էր մնում բաւարար հողակտոր ունենալու հնարաւորութիւնից: Եթէ հաշուի առնենք նաեւ հողագրկման ու բռնագրաւումների քաղաքականութեան հասցրած վնասները, պատկերն առաւել ըմբռնելի կը դառնայ:

Հողամշակութեան ցածր մակարդակի պատճառով ընկնում էր հողի բերքատուութիւնը: Այս փաստն ընդունել էր նաեւ թուրք լրագրող Եօշար Քեմալը՝ արեւելեան նահանգներ կատարած շրջագայութիւնից յետոյ գրելով. «Արեւելքում հողը բերքատուութեան տեսակէտից փչացել է՝ քոչուորական շահագործման հետեւանքով»¹⁵:

Կարինի նահանգի Կարնոյ, Բասէնի դաշտերը յայտնի էին իրենց բերքատուութեամբ: ԺԹ դարի վերջում նահանգում արտադրուել է 33,833,000 չինիկ ցորեն, գարի, հաճար, կտաւատ, կորեկ, ոսպ, 6,268,100 հօխա միրգ, լոբազգի կուլտուրաներ, պտուղ, բանջարեղէն¹⁶:

Մէկ այլ վկայութեամբ՝ 1886-1890 թթ. նահանգում տարեկան միջինում արտադրուել է 28,997,000 չինիկ կամ մօտ 12 միլիոն փութ ցորեն եւ գարի¹⁷:

1886-1890 թթ. նահանգում արտադրուած գիւղատնտեսական մթերքների քանակը հետեւեալն էր.

- Ցորեն՝ 106,156,000 հօխա,
- Ծխախոտ՝ 2550 հօխա,
- Գարի՝ 73,133,000 հօխա,
- Զիթապտուղ՝ 20,000 հօխա,
- Աշորա՝ 4,895,000 հօխա,
- Յուն. ընկոյզ՝ 797,500 հօխա,
- Կորեկ՝ 610,500 հօխա,
- Կաղին՝ 200 հօխա,
- Կտաւատ՝ 473,000 հօխա,
- Սոխ՝ 1,130,000 հօխա,
- Ոսպ՝ 22,000 հօխա,
- Խաղող՝ 762,000 հօխա,
- Լոբի՝ 1,583,000 հօխա,
- Խնձոր՝ 118,900 հօխա,
- Բակլայ՝ 66,000 հօխա,
- Տանձ՝ 132,950 հօխա,
- Բրինձ՝ 50,000 հօխա,
- Սիսեռ՝ 87,600 հօխա,
- Եգիպտացորեն՝ 55,000 հօխա¹⁸:

Կարինի նահանգը գերծ էր մնացել թուրքական բարբարոսական հողային յարաբերութիւններից: Հայ գիւղացին իր ար-

13 А. Д. Новичев, *Очерки экономики Турции до мировой войны*, М.-Л., стр. 34-44.
 14 Լ. Չորմիսեան, *Համայնապատկեր արեւմտահայ մէկ դարու պատմութեան*, Պէրոյթ, 1972, էջ 106:
 15 ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 330, թ. 8, շրջերես:

16 Հ. Ս. Էփրիկեան, *Պատկերագրող բնաշխարհիկ բնաբան*, պրակ. 1, Վեներիկ 1900, էջ 302:
 17 *Турецкий сборник*, СПб, 1909, стр. 144.
 18 Ал. Калантар, *Экономические перспективы восточной Анатолии*, Тифлис, 1913, стр. 24-25.

տադրանքի տէրը էէր. այն տնօրինում էին տեղական իշխանութիւնները, քրդերը, զանազան քոչուոր բռնակալներ:

Հողի ճնշուած ու հալածուած մշակը, յայտնուելով ծանր կացութեան մէջ, չէր էլ մտածում արտադրութեան միջոցների կատարելագործման, տնտեսութիւնն առաջ մղելու մասին: Այդ վիճակը նկատի ունէր Ի. Գոլբորոզկոն, երբ գրում էր. «Ռուսաստանի սահմանակից էրզրումի վիլայէթում օգտագործւում էր մշակելի հողերի հազիւ թէ տասներորդ մասը: Այն էլ մշակուած էր շատ վատ: Հողամշակութիւնը փոքրասիական (անատոլիական) վիլայէթներում գտնւում էր ոչ բարձր մակարդակի վրայ: Հողամշակման ձեւը նոյնն էր, ինչ մի քանի հարիւրամեակ առաջ»¹⁹:

Թուրքիայում հողատիրութիւնը ձեւաւորուել էր զաւթումների ճանապարհով: Քանի դեռ շարունակուած էին նուաճումները, տեղական բնակչութիւնն այս կամ այն կերպ կարողանում էր պահպանել իր հողային իրաւունքները: Հակահարուած ստանալով Եւրոպայում՝ թուրքերը վերադարձան ասիական նահանգներ եւ սկսեցին քոչուորական ցեղերին յատուկ բռնագրաւումներն ու հալածանքները:

ԺԹ. դարի առաջին կէսին գրեթէ աւարտուել էր «վերանուաճման» գործընթացը, եւ երկրում ձեւաւորուել էին հողատէրերի խոշոր ու միջին դասակարգերը, որոնք լրիւ անկախ էին կենտրոնական կառավարութիւնից:

Արեւմտահայ գիւղացիութեան հողազրկման քաղաքականութիւնը, որ բռնութեամբ սկսուել էր ԺԹ. դարի 60-ական թուականներին, շարունակուեց սուլթան Համիդի կառավարման տարիներին, երբ բռնագրաւումների համար պետականորէն ստեղծուած էին բոլոր պայմանները, եւ արեւմտահայ գիւղացիութիւնը կորցնում էր տնտեսական ինքնուրոյնութիւնը:

19 И. Н. Голобородко, *Турция*, М., 1912, стр. 124.

Այդ առթիւ Մուշից թուրքական պառլամենտի անդամ Գ. Տէր-Կարապետեանը յայտնում էր, որ Կարինի նահանգի խնուսի, Ալաշկերտի, Բայազետի, Բասէնի, Քեմախի, Երզնկայի, Դերջանի, Բաբերդի գաւառների 129 եւ աւելի գիւղերում իր կատարած հաշուամներով գրաւուել են «հազարաւոր արտեր, տներ, ջրաղացներ: Օրինակ՝ Երզնկա-Դերջան՝ աւելի քան 15.000 օրավար, 250-350 շէնքեր, արօտատեղեր: Բաբերդ, Բասէն, Ալաշկերտ եւ այլն՝ 25.000-ից աւելի արտեր, մարգեր, 270-ից աւելի շէնքեր, 7 ագարակներ, խնուսի 19 գիւղերէն 1000-ից աւելի արտեր, 400 շէնքեր», «Ընդամէնը Կարնոյ վիլայէթին մէջ աւելի քան 100.000 օրավար» հողեր²⁰:

Արեւմտահայ գիւղացիութիւնը զրկւում էր ոչ միայն հողից, այլեւ աշխատանքային գործիքներից, լծկաններից: 1896-1899 թթ. նահանգի Բաբերդի, Բասէնի, Քղիի, Դերջանի, Սպերի, Կիսկիմի, Թորթումի, Մամրուանի գաւառների 50,802 տնտեսութիւններն ունէին 211,446 խոշոր եղջերաւոր, 840,111 մանր եղջերաւոր անասուններ, այսինքն՝ իւրաքանչիւր տնտեսութիւն ունէր 4-5 (4,16) գլուխ խոշոր, 16-17 (16,54) մանր եղջերաւոր անասուն²¹: Բասէնի, Բայազետի, Դիադիմի, Ղարաքիլիսայի, Ալաշկերտի, Այնթափի գաւառների 17,086 տնտեսութիւններն ունէին 7402 սայլ: Ասել է թէ տնտեսութիւնների 56,7 տոկոսը զուրկ էր սայլերից²²: Կամ, ինչպէս նշում է Ռ. Բեկգուլեանցը,

20 Գ. Տէր-Կարապետեան, *Հողային հարցը կամ արիւն-արցունքով վէճը*, «Ազատամարտ», 1911, թիւ 485, 14/27 յունուարի:
 (Ե. Սարգսեանի հաշտումներով 1 օրավարը 2/3 դեւետաւի է, 1 դեւետաւի՝ 1,09 դեկտար (տե՛ս Е. Саркисян, *Аграрная политика Османского правительства в Западной Армении*, Е. 1958, стр. 68):
 21 Ա. Համբարեան, *Ագրարային յարաբերութիւնները Արեւմտեան Հայաստանում*, Երեւան, 1965, էջ 78:
 22 Նոյն տեղում:

կային գիւղեր, որտեղ կար մէկ ձի, մէկ գուլթան²³: Մէկ այլ հեղինակի տուեալներով իւրաքանչիւր 100 գիւղացուն միջին հաշուով բաժին էր ընկնում էրզրումի գաւառակում՝ 3,8, Բասէնի՝ 7,8, Թորթումի՝ 6,5, Բայրուրդի՝ 10,1, Սպերի՝ 13,0, Երզնկայի՝ 3,0 սայլ²⁴:

Բերուած փաստերն ապացուցում են ոչ միայն ունեզրկման գործընթացը, այլև այն, որ հրապարակուած թանգիմաթներն ու առաջադիմական անուանուած հողային օրէնքներն ունեցան հակառակ ազդեցութիւնը:

Հողագրկման գործընթացը կատարուած էր ցանկացած առիթով: Սակայն ամենադաժանը հարկահանութեան ժամանակ իրականացուող կամայականութիւններն էին: Գիւղացին, որ ընկել էր պարտքերի տակ, հարկերի դիմաց գրաւ էր դնում հողը: Վաշխառուները, օգտուելով առիթից, բարձր տոկոսներ էին նշանակում տրուած գումարների վրայ: Գիւղացին տարիներ շարունակ վճարում էր տոկոսները, սակայն չէր կարողանում ազատուել պարտքերից:

«Մասիս» թերթի թղթակիցն այս առթիւ յայտնում էր. «Անգամ մը, 3000 պարտքի համար գիւղացի մը եւ իր որդին 123.000 դուրուշ վճարած էին, եւ սակայն իրենց հողը տակաւին գրաւի ներքեւ էր»²⁵:

Չվճարուած պարտքը տարիներ շարունակ բերում էր նոր տոկոսներ, եւ գիւղացին ստիպուած վաշխառուին էր թողնում իր հողակտորը: Ահա այսպէս եւ գաւազան այլ միջոցներով ունեզրկուած արեւմտահայ գիւղացին գոյութեան պահպանութեան համար դիմում էր պանդխտութեան՝ յոյս ունենալով, թէ չարքաշ աշ-

խատանքով կը կարողանայ վճարել պարտքերը եւ հետ կը վերցնի հողը: Բայց կատարուած էր հակառակը:

1897 թ. նահանգի բնակչութիւնը կուտակել էր բաւականաչափ ապառիկներ²⁶.

- Կարնոյ գաւառ՝ 1,452 հազար դուրուշ Կիսկիմի գաւառ՝ 61 -- » --
- Մամրուանի գաւառ՝ 165 -- » --
- Թորթումի գաւառ՝ 139 -- » --
- Բասէնի գաւառ՝ 459 -- » --
- Բայրուրդի գաւառ՝ 633 -- » --
- Սպերի գաւառ՝ 381 -- » --
- Դերջանի գաւառ՝ 1486 -- » --
- Քղիի գաւառ՝ 1928 -- » --
- Խնուսի գաւառ՝ 1,815 -- » --:

Արեւմտահայութեան հողագրկման գլխաւոր դերակատարները տեղական իշխանութիւններն ու դատարաններն էին: Կարինի նահանգի պատուիրակ, նահանգում բարենորոգումների անցկացման յանձնաժողովի հսկիչ պարտիզակցի Վահան վարդապետը, հանդիպելով Անգլիայի թուրքամէտ դեսպան Լէյարդին, յայտնում է նրան, որ թուրքական կառավարութեան նպատակը հայերի հողերը մահմեդականներին յանձնելն է: Կառավարութիւնը խաբէութեամբ հայերից վերցնում էր կալուածազրեքը հաւաստիացնելով, թէ հողային իրաւունքը գրանցելու էր յատուկ գրքում: Սակայն կատարուած էր հակառակը. «Երկար ատեն կ'անցնի օր մը ալ այս խեղճ հայերն կը տեսնեն, որ իրենց հողի տէրերն իրենք չեն»²⁷:

Նոյն վարդապետը Կարինում Անգլիայի հիւպատոս Տրոտերին է յանձնում յատուկ տեղեկագիր, որտեղ ընդգծուած ներկայացնում էր հայութեան իրաւազուրկ եւ հողագուրկ վիճակը: Տեղեկա-

23 P. Бекгулянци, По Турецкой Армении, Ростов н/Д., 1914, стр. 46.
 24 Ф. Грязнов, Военный обзор передового театра в Азиатской Турции, Тифлис, 1897, стр. 163-164.
 25 «Մասիս», 1880, թիւ 2637:

26 Ա. Համբարեան, Ազրաբայի յարաբերութիւնները Արեւմտեան Հայաստանում 1856-1914 թթ., Երևան, 1956, էջ 114:
 27 «Մշակ», 1897, թիւ 209:

գրում կառավարութեան հողային քաղաքականութեան մասին վարդապետը մասնաւորապէս գրում էր. «Շատ անգամ պատահել է, որ թուրքերը օրինաւոր տէրեր են դարձել այն հողերին, որոնք պետական մոնոփոլիստներով (թափու) ծախուած են եղել այս կամ այն հայու վրայ, թուրքերը սպառնալիքներով ու զանազան աններելի եղեռնագործութիւններով, պատահում էր, որ մինչեւ անգամ սպանութեամբ խլում են հայերից թապուները եւ այդպիսով տէր են դառնում հայերի կալուածքներին»²⁸:

Գիւղացին բողոքում էր իշխանութիւններին, բայց Ղուրանի վրայ յենուած թուրքական դատարանը հարցերը լուծում էր մահմեդականների օգտին, որովհետեւ էր քրիստոնեաների վկայութիւնները չէին ընդունուում, թէեւ, «եթէ նրանք (դատաւորները - Յ. Ջ.) փոքր ինչ նեղութիւններ են նայել պետական մատեանները, նրանք անշուշտ կը գտնէին հայ կալուածատիրոջ անունը, թէպէտ այդ նրանց առանց այդ էլ շատ լաւ յայտնի է»²⁹:

Այս եղանակով նահանգի Դերջան գաւառում յափշտակուել էր 1500 սոմար ցորենի վարելահող, 15,000 դահեկան արցողութեամբ կալուածազրեք, 35 գիւղերից հանելով հայերին՝ քրդերը տիրացել էին նրանց տներին, ունեցուածքին, հողերին³⁰:

Իշխանութիւնների ուշադրութիւնից չէին վրիպում նաեւ եկեղեցու կալուածքները: Տեղական իշխանութիւնները քրիստոնէական եկեղեցիներին ու վանքերին ստիպում էին հողերը վաճառել կամ օտազործման տալ միմիայն մահմեդականներին: Այս առթիւ նոյն Վահան վարդապետը յայտնում է, որ «Բ. Դուսէն առնուած հրամաններ կը հրամայէին իրենց հողերը քուրդերուն տալ եւ ոչ երբեք հայոց...»³¹:

28 «Մշակ», 1880, թիւ 4:
 29 Նոյն տեղում:
 30 «Մշակ», 1879, թիւ 95:
 31 Նոյն տեղում:

Հարստահարումներն ու հողագրկումներն առաւել տարածուած էին այն գաւառներում, որտեղ հողը բարեբեր էր: Ղ. Ինճիճեանը, նկարագրելով վարուող քաղաքականութեան պատճառով ստեղծուած կացութիւնը, գրում էր. «Ըստ ոմանց ասելոյ յառաջագոյն ունէր (Երզնկայի գաւառը - Յ. Ջ.) 250 գիւղօրէս. այլ այժմ ի պատճառս կեղեքելոյ իշխանաց, բազում գիւղօրէք նոր լքեալ կան եւ անմարդաբնակ, եւ գիւղօրէք ինչ կործանեալք, կամ ըստ կիսոյն քայքայեալք»: Բասէնի գիւղերի բնակիչներից շատերը, քրդերի ու թուրքերի հարստահարութիւններից խուսափելու նպատակով, «անդադար փոփոխին ի տեղափոխի տեղի»³²:

Կարնոյ նահանգի Քղիի գաւառը, որտեղ տեղաւորուած էին նաեւ զգալի թուով քրդեր, աչքի էր ընկնում հարստահարութիւնների, թալանի, բռնազրաւումների բազմաթիւ ու բազմատեսակ երեւոյթներով:

«...Այս գաւառն ամէն օր գրեթէ նոր թատերախաղ մը կ'ունենայ, որու դերասանը քուրդն է, տնօրէնը՝ պէյերն, եւ ողբերգութիւնը հայ երիտասարդներու վրայ կը վերջանայ...»³³:

Եղեռնագործութիւնների անբաժան մասն էին կազմում հողագրկման դէպքերը. «Պէյերն հողային խնդրոյ մը նկատմամբ այստեղի հայոց գլխուն հազար ու մէկ փորձանքներ» բերելուց յետոյ³⁴, երբ նրանց դէմ առ դէմ մնում էր հողագուրկ ու մերկ, ունեցուածքից զուրկ հայը, դրանով էլ չէին բաւականանում, եւ նրանց քշում էին տարագրութեան:

Ասել, թէ Բ. Դուրը «անուշադրութեան» էր մատնում նահանգում տիրող իրավիճակը, սխալ կը լինի: Ընդհակառակը,

32 Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասացն աշխարհի, Բոս. Ա., Վեներիկ, 1806, էջ 93, 98:
 33 «Մշակ», 1880, թիւ 92:
 34 «Մշակ», 1880, թիւ 197:

մեծ մասնակցություն էր ցուցաբերում նահանգի հայ բնակչության անապահովության ու հողազրկման քաղաքականության անցկացման հարցում: Երբեմն-երբեմն նահանգ էին գալիս թուրք վերաքննիչներ, «ստուգում» հարստահարությունների եւ հողազրկման բողոքները, «վերականգնում» արդարությունը:

Այսպիսով, ամէն մի հայ ընտանիք ունէր 1/12 չորոց, ամէն մի թուրք ընտանիք՝ 1/4 չորոց հող: Բեկերը իւրաքանչիւր հայ ընտանիքից 36 անգամ շատ հող ունէին: Աւելին, 6 հոգուց բաղկացած ընտանիքի անդամին բաժին էր հասնում 1/72 չորոց հող: Մեօինիֆ բէկը միայն Կարնոյ դաշտում ունէր 10,000 արժէքի հող, Մաւրմեզ բեկը՝ 2000 սոմարի հող³⁵:

Մեծ չափերի հասած հողազաւթումները ոչ մի արձագանք չէին գտնում Կ. Պոլսում: Ընդհանուր էր Ա-Դօն, երբ գրում էր, թէ կառավարությունն այն իմաստով, ինչ իմաստով որ հասկացում է «Տաճկաստանի ասիական վիլայէթներում», գոյություն չունի, աւելին՝ «օրէնք այն իմաստով, որ հասկացում է այժմ եւ օրէնքի գործադրությունն այն մտքով, ինչ մտքով որ ընդունում է առողջ տրամաբանությունը, Տաճկաստանի ասիական վիլայէթներում գոյություն չունի»³⁶:

Կարինի նահանգում հողազրկման գործընթացը կարելի է բաժանել փուլերի. 1) 1828-1829 թթ., երբ տեղի ունեցաւ նահանգի հայութեան գաղթը դէպի Արեւելեան Հայաստան, եւ թուրք, քուրդ, չերքէզ ու աջար գաղթականները տէր դարձան հայերի հողերին.

2) 1853-1856 թթ., երբ ահագնացան հակաքրիստոնէական գործընթացները.

3) 1877-1878 թթ. պատերազմից յետոյ, երբ որպէս պետական քաղաքականութիւն ընդունուեցին հայութեան ունեզրկումն ու քայքայումը, հայութեանն իր հայրենիքից քշելու ճանապարհով «Հայաստանն առանց հայերի» ծրագրի իրականացումը.

4) 1894-1896 թթ. ջարդերից սկսած մինչեւ Առաջին աշխարհամարտը:

Այսինքն, սուլթանական վարչակարգը մինչեւ 1894 թ. իրականացնում էր հայութեանը ոչնչացնելու տնտեսական ծրագիր, իսկ 1894-ից սկսած՝ գործադրուեց հայութեանը ֆիզիկապէս բնաջնջելու ծրագիրը:

Վերոնշեալ գործօնները եւ յատկապէս կոտորածների քաղաքականութիւնը, որին սկիզբ դրուեց 1891 թ. (երբ կազմակերպուեցին համիդիէ գնդերը), ունեցան իրենց ազդեցությունը նահանգի հայութեան տեղաշարժերի ու ժողովրդագրութեան փոփոխությունների վրայ:

LES ARMÉNIENS ISLAMISÉS DANS LES

« TAKRIRS » (1869 – 1895)

Anuş Kazan Asaduroğlu

les usages de la conversion² des Arméniens à la religion islam.

I – LA CONVERSION A LA RELIGION ISLAM JUSTE AVANT 1689 ET LES RAISONS DU CHOIX DES « TAKRIRS » :

À partir de la seconde moitié du XVIIIème siècle, l'état général de l'Empire ottoman dans plusieurs domaines comme économique, culturelle et technologique devient relativement plus faible par rapport aux développements réalisés en Europe et comme conséquence à ceux-ci nous constatons un changement de sa situation géopolitique. Dans ces conditions L'Empire ottoman s'oblige à coopérer avec les pays européens et la Russie pour garder l'unité ses territoires. De telle sorte qu'accepter les conditions sociales c'est-à-dire les réformes sociales imposées par les pays européens et exigées par la

Dans cet article, nous délimitons notre objet d'étude par la conversion des Arméniens à la religion islam en se basant sur les 223 « takrirs » joints au « takrir très circonstancié » du 8 février 1895 de Monseigneur Izmirlian, Patriarche des Arméniens à Istanbul. Les « takrirs ¹ » en question se situent entre 1869 et 1895, le premier daté du 22 novembre 1869 et le dernier du 4 février 1895. Le Patriarche Izmirlian adresse ce « takrir très circonstancié » pour révéler la situation des Arméniens qui était devenue de plus en plus pénible et insupportable et qui s'est aggravée malgré plusieurs demandes écrites faites à la porte depuis les 26 dernières années, de 1869 au 1895.

Après avoir présenté les « takrirs » en général, et en relation de leurs choix, par le Patriarche M. Izmirlian, nous allons les grouper selon leurs effets sur la conversion comme des facteurs primaires et secondaires, et ensuite nous présenterons les principes,

2 Les conversions des Arméniens à la religion islam, prend une place importante dans l'histoire des Arméniens. L'un des cas le plus significatif est celui de la conversion des Hamchéntzi, converti en 1670 – 1700. Les conversions à la religion musulmane ont continué, et sont intensifiées surtout avant les grands massacres hamidiens, et ont atteint leur paroxysme pendant les massacres de 1894 et surtout 1895 - 1896. Nous devons parler également des conversions réalisées durant les massacres d'Adana, en 1908. Par contre les conversions des Arméniens, durant et après le génocide des Arméniens, n'ont pas été encouragées par le pouvoir de l'époque, au contraire, elles sont contrôlées strictement et interdites à plusieurs reprises.

1 Notre travail est basé sur la traduction en français de cette requête et de cette liste de « takrirs », traduits également en français probablement pour être transmis discrètement aux responsables des Puissances européennes comme ceux des rapports sur les massacres des Arméniens de 1894 – 1896. Kévorkian, H. Raymond, Paboudjian B. Paul, Les Arméniens Dans l'Empire Ottoman, à la Veille du Génocide, Les Editions d'Art et d'Histoire, 1992, p. 15.

35 Նոյն տեղում:

36 Ա-Դօ, Վաճի, Բիրիխի եւ Էրզրումի վիլայէթները, Երեւան, 1912, էջ 264: